ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, 0023, Արշակունյաց պողոտա 7
Հեռ.՝ +374-60-474144

04.05.20 № 117/2402-20

Ձեր _____ առ _____

«Սմարթ» համատիրության
նախագահ Հենրիկ Ստեփանյանին

Հարգելի՛ պարոն Ստեփանյան,

Ի պատասխան Ձեր առցանց դիմումի՝ հայտնում ենք հետևյալը.

Երևան քաղաք, Ն. Ստեփանյան փողոց 3/6 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի կադաստրային գործի ուսումնասիրությունից պարզվել է, որ ըստ քաղաքաշինական փաստաթղթերի (նախագծի) շենքի նկուղային հարկում նախատեսված է եղել կառուցել պոմպակայան: Շենքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում իրականացնելուց հետո այն որպես առանձին գույքային միավոր՝ Ն. Ստեփանյան փողոց 3/6 շենքի թիվ 282 հասցեավորմամբ սեփականության իրավունքով գրանցվել է «Օլիմպ Քնսթրաքշն» ՍՊԸ-ի անվամբ, որից հետո բաժանվել է երկու մասի՝ Ն. Ստեփանյան փողոց 3/6 շենքի թիվ 282 և 283:

Ինչ վերաբերում է պոմպակայանի տարածքում առկա սարքավորումների (պոմպեր, խողովակներ և նման այլ սարքեր) պատկանելիությանը, ապա հայտնում ենք, որ Կադաստրի կոմիտեն նման տեղեկատվությանը չի տիրապետում:

Գրությամբ բարձրացված մյուս հարցերի քննարկումը ևս Կադաստրի կոմիտեի իրավասությունից դուրս է:

4/30/2020

X

ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: PETROSYAN ARMAN 2907790536 Արման Պետրոսյան

Կատարող՝ Է. Գրիգորյան
Մեթոդաբանության բաժնի պետ
Հեռ.՝ 060-474138

Կադաստրի
կոմիտե